ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19.02.2024թ. N 03 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվար 2024 թվականի N 30

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N 03 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

Հրազդան համայնքի ավագանին <u>ՈՐՈՇՈՒՄ Է՝</u>

1.Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 19-ի N 03 արտահերթ նիստի օրակարգը.
1) Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 9-ի N 147 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի գլխավոր հատակագծի նախագծի հաստատման մասին
3) Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին
4) «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու, կազմակերպության կանոնադրությունը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄՈՆԹԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 փետրվար 2024թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվար 2024 թվականի N 31

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի
N 147 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ գյուղի պարզեցված գլխավոր հատակագծի նախագծի հաստատման մասին» N 147 որոշումը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -4

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ		ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄՈՆԹԵ	
ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ		ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ	
ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ		ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ	
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ		ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ	
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ			
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ			
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ			
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ			
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ			
ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 փետրվար 2024թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվար 2024 թվականի N 32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3 -րդ հոդվածով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի գլխավոր հատակագծի նախագծի վերաբերյալ 2024 թվականի հունվարի 31-ի N 2 դրական եզրակացությունը.

Հրազդան համայնքի ավագանին <u>ՈՐՈՇՈՒՄ Է՝</u>

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի գլխավոր հատակագծի նախագիծը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -4

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ		ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄՈՆԹԵ	
ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ		ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ	
ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ		ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ	
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ		ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ	
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ			
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ			

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 փետրվար 2024թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվար 2024 թվականի N 33

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2061-Ա որոշումը.

Հրազդան համայնքի ավագանին <u>ՈՐՈՇՈՒՄ Է՝</u>

1.Որպես նվիրատվություն ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2061-Ա որոշմամբ անհատույց սեփականության իրավունքով Հրազդան համայնքին փոխանցվող Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Ս. Սպանդարյան փողոց 72/5 հասցեում գտնվող 0.07446հա մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 19042023-07-0205):
2.Օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել նվիրաբերության պայմանագիր և պայմանագրից ծագող իրավունքները ներկայացնել պետական գրանցման:
3.Սահմանել, որ պայմանգրի կնքման և իրավունքների նկատմամբ պետական գրանցման աշխատանքները ենթակա են իրականացման Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի միջոցների հաշվին:
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -3

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ		ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄՈՆԹԵ	
ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ		ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ	
ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ		ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ	
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ			

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 փետրվար 2024թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվար 2024 թվականի N 34

«ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հրազդան համայնքի ավագանին <u>ՈՐՈՇՈՒՄ Է՝</u>

1. Հիմնադրել «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ Կազմակերպություն):
2. Հաստատել «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
3. Հաստատել «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը՝ համաձայն N 2 հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -2

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄՈՆԹԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 փետրվար 2024թ.
ք.Հրազդան

Հավելված N 1

Կազմված է 19 փետրվար 2024թ. և բաղկացած է թերթից

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հրազդան համայնքի ավագանու

2024 թվականի փետրվարի 19-ի

N 34 որոշմամբ

Հրազդան համայնքի ղեկավար

_____ Ս. Միքայելյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարության

իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալության կողմից

«_____»_____ 2024թ.

գրանցման թիվ _____

ՀՎՀՀ _____

_____ աշխատակից

«ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱԶԴԱՆ 2024թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնադրում է Հրազդան համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 19-ի N որոշմամբ:

Կազմակերպությունը ստեղծվում է առանց ժամկետային սահմանափակման:

1.2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Քաղաքացիական և Աշխատանքային օրենսգրքերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Գնումների մասին» օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3. Կազմակերպության հիմնադիրը Հրազդան համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Հրազդան ավագանու (այսուհետ՝ Հիմնադիր), որի անունից հանդես է գալիս Հրազդան համայնքի ղեկավարը (այսուհետ՝ Համայնքի ղեկավար):

1.4. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

1.6. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ, և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.7. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով իր անվանմամբ կնիք, խորհրդանիշ, ձևաթղթեր և ՀՀ

օրենսդրությամբ չարգելված անհատականացման այլ միջոցներ:

1.8. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.9. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ Կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

1.10. Կազմակերպության անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

կրճատ՝«ԿԽԿ» ՀՈԱԿ.

ռուսերեն լրիվ՝ «Центр по уходу за животными» общинная некоммерческая организация.

կրճատ՝ «ЦУЖ» ОНКО.

անգլերեն լրիվ՝ «Animal care center» community non commercial organization.

կրճատ՝«ACC» CNCO:»:

1.11. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Հրազդան քաղաք, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան Հրազդան քաղաքում թափառող կենդանիների հայտնաբերման և նրանց թվաքանակի կանոնակարգման համալիր ծրագրի մշակումն ու իրականացումն է:

2.2. Կազմակերպության նպատակներն են՝

2.2.1. Մշակել և իրականացնել Հրազդան համայնքում թափառող կենդանիների հայտնաբերման և նրանց թվաքանակի կանոնակարգման համալիր ծրագիր,

2.2.2. Իրականացնել Հրազդան քաղաքում առկա թափառող կենդանիների վիճակագրության ուսումնասիրություններ, համարակալման, քարտեզագրման,

նույնականացման և խնամքի աշխատանքներ,

2.2.3. Համագործակցել ոլորտում մասնագիտացած միջազգային, տեղական մասնագիտական և հասարակական կազմակերպությունների հետ, համատեղ մշակել և իրականացնել թափառող կենդանիների հիմնախնդիրների լուծման տարաբնույթ ծրագրեր,

2.2.4. Իրականացնել Հրազդան համայնքում առկա թափառող կենդանիների անասնաբուժական ծառայություններ (ախտորոշումներ, պատվաստումներ, բուժումներ, վիրահատություններ, խնամք և այլն),

2.2.5. Իրականացնել թափառող կենդանիների խնդիրների լուծմանը նպաստող կրթական և իրազեկման աշխատանքներ:

2.3. Կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

2.3.1. Իրականացնել կենդանիների հայտնաբերման և նրանց թվաքանակի կանոնակարգման համալիր ծրագրեր,

2.3.2. Իրականացնել կենդանիների անասնաբուժական ծառայություններ (ախտորոշումներ, պատվաստումներ, բուժումներ, վիրահատություններ, խնամք և այլն),

2.3.3. Ստեղծել Հրազդան քաղաքում թափառող կենդանիների խնամքի կենտրոններ (կացարաններ) և շահագործել դրանք:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, Համայնքի ղեկավարը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ Տնօրենը: Համայնքի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը, Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

3.2. Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման

իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

3.2.1. Կազմակերպության հիմնադրումը,

3.2.2. Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

3.2.3. Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

3.2.4. Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

3.2.5. Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

3.2.6. Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

3.2.7. Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

3.3. Համայնքի ղեկավարն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Համայնքի ղեկավարը՝

3.3.1. Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

3.3.2. Իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

3.3.3. Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

3.3.4. Լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

3.3.5. Վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

3.3.6. Վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

3.3.7. Հիմնադրի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը,

3.3.8. Հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

թ) իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

Կազմակերպության գործադիր մարմինը՝

3.4. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Համայնքի ղեկավարը: Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի ու Համայնքի ղեկավարի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրության, Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

3.5 Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է Համայնքի ղեկավարը:

3.6 Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:

3.7 Կազմակերպության տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական ու ստեղծագործական աշխատանքից:

3.8 Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար:

3.9 Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը

պարտավոր է չկատարել Հիմնադրի, Համայնքի ղեկավարի՝ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.10 Կազմակերպության տնօրենը՝

3.10.1. Առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

3.10.2. ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու Համայնքի ղեկավարի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

3.10.3. Տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

3.10.4. Աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր:

Կազմակերպության կազմում հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ ստեղծվելու դեպքում դրանց ղեկավարներին (տնօրեններին) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է միայն Հրազդան համայնքի ղեկավարի համաձայնությամբ,

3.10.5. Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

3.10.6. Ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում լիազորված համայնքային մարմին,

3.10.7. Բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

3.10.8. Իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.1. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

4.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, Հիմնադրի որոշումներին և /կամ/ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

4.3. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

4.4. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

4.5. Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

4.6. Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Հրազդան համայնքի ղեկավարի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել՝ բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

4.7. Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

4.8. Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

4.9. Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուր են հանդիսանում ՀՀ պետական և համայնքային բյուջեներից հատկացումները, վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված ու ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցները, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումներն ու հանգանակությունները, տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհները: Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդը:

4.10. Հիմնադրի որոշմամբ Կազմակերպությունը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

4.11. Լիցենզավորված գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել միայն Կազմակերպության ստացած լիցենզիայի, կամ Հիմնադրի համապատասխան որոշման ու հանձնարարականի հիման վրա:

4.12. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

4.13. Կազմակերպության կողմից իր կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4.14. Կազմակերպության կողմից այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

4.15. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը եւ պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների

համար նախատեսված կարգով ու չափով:

4.16. Կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

4.17. Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրն ու Համայնքի ղեկավարը:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

5.1. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Համայնքային Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

5.3. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

Հավելված 2
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 19-ի
N 34 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 14

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	«Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	Տնօրեն	1	274000	274000
2		Գլխ. հաշվապահ	1	120000	120000
3		Գործավար	1	120000	120000
4		Անասնաբույժ	1	124000	124000
5		Անասնաբույժ-անեսթեզիոլոգ	1	138000	138000
6		Կենդանի որսող	2	164000	328000
7		Կենդանի խնամող	2	137333	274666
8		Հավաքարար	1	137333	137333
9		Վարորդ/բռնող	1	164000	164000
10		Պահակ	3	124000	372000
	Ընդամենը		14		2051999